

ՀԱՍՏԱՏԱԿԱՆ ԵՎ ԺԻՏԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՆԵՐԻ ՎԵՐԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ ԴԱՍԱԿԱՆ ԳՐԱՐԱՐՈՒՄ

Վերիմաստավորումը (ռուս. транспозиция, переосмысление) լեզվաճանաչման այն երևույթն է, երբ լեզվի կառուցվածքային միավորները կիրառվում են իրենց համար անսովոր. հաճախ հակադիր քերականական նշանակությամբ՝ արդյունքում ձևեր բերելով ոճական զգալի արտահայտչականություն:¹ Վերիմաստավորման ժամանակ առաջին հերթին գործ ենք ունենում միմյանց հետ իմաստային կամ շարույթային որոշակի հարացույց կազմող լեզվական ձևերի հետ, որոնք ոճական որոշակի համատեքստում կարող են գործածվել մեկը մյուսի վոլսարեն: Այդպիսի հարացույց են կազմում մասնավորապես, հաստատական և միտական նախադասությունները: Թեև հաստատական նախադասություններն առաջին հերթին կիրառվում են որևէ իրողություն կամ երևույթ հաստատելու, իսկ միտական նախադասությունները՝ դրանք բացասելու նպատակով, սակայն առանձին դեպքերում, մասնավորապես ոճական նպատակներով հաստատական իմաստ կարելի է արտահայտել միտական շարահյուսական կառույցների օգնությամբ և ընդհակառակը: Դասական գրարարում մեզնիս ուշագրավ լեզվական իրողությունների հաճախակի ենք հանդիպում:

Ժխտական նախադասությունների միջոցով գրարարում հաստատական նորոժմաստ արտահայտվում է մի քանի եղանակով: Համեմատաբար պարզ կառուցվածք ունեն այն վերիմաստավորվող նախադասությունները, որոնց կազմում միտական բայի կամ մասնիկի հետ համաժամանակ հանդես են գալիս քերականական այնպիսի միավորներ, որոնք հակադրվում են ժխտական բայաձևով ստորոգյալի քերականական իմաստին՝ նրան բովանդակային պարունակ հաստատական երանգ վերագրելով: Այսպես, *Յիտու՝ ասէ գնա. գի՞ ասես զիս բարի. չիք որ բարի՝ բայց մի Աստուած Հայր /Ղուկ., ԺԷ, 19/* ընդգծված նախադասությունում *չիք որ բարի* նախադասության միտական բովանդակությամբ հակադիր իմաստ է հաղորդում *բայց* նախադասությունը, որը, ի տարբերություն համանուն և ներհակույսն իմաստ արտահայտող *բայց* համադասական շարկայի, այս համատեքստում կիրառվել է *բացի* կապական ձևիմաստով՝ բովանդակային պարունակ հաստատական բնույթ հաղորդելով այս լեզվական կառույցին: *Յիտու՝ ասէ գնա. գի՞ ասես զիս բարի. միայն մի Աստուած Հայր է բարի:* Ինչպես տեսնում ենք, փոխակերպման արդյունքում միտական ստորոգյալին ու *բայց* կապական բառին փոխարինման են գալիս դրական համապատասխան բայաձևն ու *միայն* ստիժանավակման իմաստ արտահայտող եղանակավորող բառը: Բերենք այսպիսի կադապարների մի քանի օրինակ. *Եւ ասէ գնոսա Յիտու. ոչ է մարգարէ անարգ. բայց երբ ի գառոռի իւրում. եւ յազգաստեմի. եւ յ տան իւրում /Մարկ., 2, 4/: Եւ ոչ ինչ գոյր ի տապանակին. բայց երկու տախտակքն յարեղևք /ԼԵ Թագ., Ը, 9/:* Հետաքրքիր է, որ գրարարում հանդիպում են նաև այնպիսի միտական նախադասություններ, որտեղ *բայց* կապն ու *միայն* եղանակավորիչը հանդես են գալիս համատեղ. *Եւ տեսեալ բզննի մի ի վերայ ճանապարհին. եկն ի նա, եւ ոչ ինչ եգիտ ի նմա՝ բայց միայն տերն /Մարկ., ԺԷ, 13/: Եւ մտեալ ի տուն՝ ոչ գոր եթող մտանն բայց միայն գՊետրոս եւ գՅակոբոս եւ գՅովհաննէս /Ղուկ., Ը, 51/:* Ըմբարձին ճաչս իրենանց եւ ոչ գոր տեսին՝ բայց միայն գՅիտու /Մատթ., ԺԷ, 8/: Այս և նման դեպքերում վերիմաստավորված դրական կառուցվածքներում այնս լրացուցիչ եղանակավորող բառ չի ավելանում, պարզապես վերանում են *բայց* կապական բառն ու ժխտական մասնիկը /*միայն տերն եգիտ ի նմա* /:

Ուշագրավ է, որ երբեմն հիշատակված կառույցի փոխարեն գործածվում է անցյալ դերբայ + ոչ + բայց քերականական կադապարը՝ մասնավորապես ծավալուն դերբայական դարձվածի կազմում. *Եւ ի հա ի մեծի հինգշաբաթոցն ի գառնի աղուհացիցն ի եսկման, հաղորդեալ ի ժամ երեկոյին պաշտաման՝ սրբոյ եւ մեղաքաւիչ*

¹ Թ. Շա հ վ ե յ յ ա ն, Պարզ նախադասության կազմության ոճական վերիմաստավորումը գրարարում. «Լեզու և լեզվաբանություն», Եր., 2005, 1, էջ 28:

խորհրդոյ կենարարին, ճաշակեալ այլ բնաւ աւելի ինչ ոչ՝ բայց հաց եւ ջուր եւ աղ, ըստ կանոնեւոյ մեծի /Փարս., 28/: Պարզ է, որ փոխակերպման արդյունքում այստեղ գործ ենք ունենալու նույնպէս դերբայական դարձվածի հետ՝ առանց միտական մասնիկի ու բայց կապի, սակայն միայն եղանակավորիչի պարտադիր ներկայութեամբ՝ *Եւ էի ես ի մեծի երեզլաբարթոյն ի գատկի աղուհացիզն ի հսկման, հաղորդեալ ի ժամ երեկոյին պաշտաման՝ սրբոյ եւ մեղսաբառիչ խորհրդոյ կենարարին, ճաշակեալ միայն հաց եւ ջուր եւ աղ, ըստ կանոնեւոյ մեծի*:

Երբեմն բայց կապական բառի վախարեն միևնույն լեզվաճական գործառույթով գործածւում է վերջինիս բաց շարահյուսական համանիշը. այսպէս՝ *Եւ մատուցեալ բազում աղօթիւք խնդրուածոց հայցէր ի Տէր Աստուած Իսրայէլի՝ եւ ասէր. Տէր իմ եւ թագաւոր մեր, զոյ միայն օգնեա՝ ինձ միայնումս. որ ոչ ունիմ ինձ օգնական բաց ի քէն /Եսթեր., Գ., 3/: Եւ սա ասէ, որպէս ասացելոյ եղիցի. զի գիտացես երէ չիք այլ որ ի բաց ի տեառում աստուծոյ մերմէ /Ելք., Ը, 10/: Եւ ոչ էր քաղաք գոր ոչ մատնեաց տէր որդեաց Իսրայէլի. բաց ի խեւացեցն որ բնակեալ էր ի գաբառն. զամենեսին առ պաաեբազմաւ /Յեւու., ԺԱ, 19/: Վերջին դեպքերում արտահայտման պլանի բովանդակային վերիմաստաւորման ժամանակ այստեղ իրականացվում են նույն լեզվական ձևափոխությունները, ինչ որ բայց կապի կիրառության պարագայում:*

Բացառման քերականական իմաստ արտահայտող մյուս կապական միավորները նույնպէս ունակ են նմանատիպ ճնական-շարահյուսական վերիմաստաւորման գործառույթի նախապայման հանդիսանալու անշուշտ, նախադասության ստորոգելիական գլխավոր անդամի միտական կառուցվածքի պարագայում: Այսպէս *Եւ նորա են որ առնեն գհանդերծաւ արանց, եւ նորօք գարդարին եւ փառաւորի մարդիկ. եւ ոչ է հնար առանց՝ նոցա լինել մարդկան /Եզր., Գ, 17/ կառույցում րնդգծված միտական նախադասության իմաստը նույնպէս բովանդակային պլանում հակադիր նշանակություն է ստանում առանց բացառման կապի գործառույթյան արդյունքում Միայն նորօք է հնար լինել մարդկան: Ահա նման այլ օրինակներ. Եւ ասէ Փարսաւոն ցՅոփսէփ. ահաւսիկ եւս Փարսսոն. առանց քո ոչ որ համբարձէ զձեռս իւր եւ գոտս իւր ի վերայ ամենայն երկրիս Եգիպտացոց /Ծն., ԽԱ, 44/: Վկայ սուտ՝ առանց պատժի ոչ լիցի /Առաւ., ԺԹ, 5/: Ոչ է հնար մեզ առանց ձեր, եւ ոչ գաւակի մկրտու՝ երբէք սլառաւել փրկութեան եւ կեալ /Փարս., 58/: Բայց առանց հաւատաց առնեալ է հաճոյ լինել /Եբր., ԺԱ, 6/:*

Ուշագրավ են նաև այն շարահյուսական կառույցները, որտեղ առանց կապական միավոր պարունակող միտական նախադասության հետ միաժամանակ իմաստային կրկնության գործառույթով օգտագործվում է այդ քերականական կաղապարի վերիմաստաւորված տարբերակը՝ համապատասխան հաստատական նախադասությունը, որի սովորականում ավելի ակնառու է դարձնում նախադասության բովանդակությունը. Եւ այնպիսի առակօք խօսէր րնդ նոսա գրանն, որպէս կարօզ լինէին լսել. եւ առանց առաւի ոչինչ խօսէր րնդ նոսա /Մարկ., Գ, 33/: Ամենայն ինչ նույաւ եղև. եւ առանց նորա եղև եւ ոչինչ՝ որ ինչ եղևն /Յովհ., Ա, 3/: Չայս ամենայն խօսեցաւ Յիսուս առակօք րնդ ժողովորդսն. եւ առանց առակի ոչինչ խօսէր րնդ նոսա /Մատթ., ԺԳ, 34/:

Համեմատաբար պարզ վերիմաստաւորված շարահյուսական կառույցներից է նաև նվագասույրը /ռուս. *ЛИТОТА*/՝ լեզվաճական այն արտահայտչամիջոցը, որն այս կամ այն հատկանիշի ձևական միտման միջոցով հաստատագրում է հակիմաստ հատկանիշի սովորականությունը (ոչ գեղեցիկ – տգեղ, ոչ վառ – լավ): Այս շարահյուսական հնարն ամենրիւմէլ է տարբերակել նվագաբանությունից. վերջինս բառային պատկերավորման միջոց է, չափազանցության հակառակ երևույթը, երբ բառային միջոցների օգնությամբ բնութագրվում, նվագեցված է ներկայացվում առարկայի այս կամ այն հատկանիշը: Ի տարբերություն նվագաբանության՝ նվագասույրն ունի միանգամայն որոշակի շարահյուսական կառուցվածք՝ *միտական մասնիկ + հատկանիշ արտահայտող բառ*, այդ պատճառով այն պատկանում է շարահյուսական արտահայտչամիջոցների թվին:² Գրաբարում այս վերիմաստաւորման եղանակը հաճախակի է կիրառվել. այսպէս՝ *Ոչ է բարոնոր լուրն գոր ես լսեմ /Ա թագ., Բ, 24/: Չէ բարի բանդ գոր արարեր /*

² Նվագասույրի մասին ավելի մանրամասն տես *М. Кузнец, Ю. Скребнев, Стилистика английского языка. - Ленинград, 1960:*

Թագ., Ի2, 16/ Ոչ է ծառայ մեծ քան գտեր իւր /Յովհ., ԺԳ, 16/ Անառակ է գինի՝ եւ բշնամանող արբեցութիւն. եւ ամենայն որ յառնակի ընդ նոսա՝ չէ իմաստուն /Առակք, Ի, 1/: Բովանդակային պլանում մեջբերված նվագասուրբները վերածվում են միանգամայն հաստատական նախադասությունների, որտեղ ժխտական մասնիկը կորչում է, իսկ հատկանիշ արտահայտող բառի փոխարեն հանդես է գալիս նրա հակառակը. *Չայր է յորն գոր ես յսեմ, Փորք է ծառայ քան գտեր իւր:* Չնայած երկու տարբերակների բովանդակային հարթությունների նույնականությանը՝ նվագասուրբներն ավելի արտահայտիչ ու պատկերավոր են հաղորդում հեղինակի միտքը, քան նրանց վերլուծատալիքով կառույցները: Հետաքրքիր է, որ գրաբարում ռժական կրկնության նախատեղի այս տարբերակները երբեմն հանդիս են գալիս համատեղ՝ միևնույն նախադասության կազմում. *Գործակից է առն խրում ամենայն բարեաց կենաց՝ եւ ոչ չարեաց /Առակք, ԼԱ, 12/ Առեալ գկրակարանն՝ վարեցին ի քուրսն գկրակսն, որպէս ի գկրկս եղբօր, ըստ ասելոյ ատա վարդապետացն Պարսից. գոր ըմբռնեալ ցրոցն բշնամաքար եւ ոչ եղբայրաբար՝ ծախեցին /Փարս., 63/:*

Հատառտական լեզվաբանական նրբիմաստ արտահայտելու համար գրաբարում լայնորեն կիրառվել են ժխտական բաղադրիչներով բարդ ստորադասական նախադասություններ, որտեղ կրկնակի ժխտման արդյունքում ուրվագծվում է ողջ բարդ նախադասության դրական բովանդակությունը: Այսպես՝ *Բայց այս ազգ ոչ էլանէ. երբ ոչ՝ աղօթիւր եւ պաեովք /Մատթ., ԺԷ, 20/:* Արտահայտման պլանում գործ ունենք մի բարդ ստորադասական կառույցի հետ, որտեղ երկրորդական նախադասության մեջ նշվում է այն պայմանը, որի իրագործման դեպքում հնարավոր է դառնում գլխավոր նախադասությունում նկարագրվող գործողության իրականացումը: Դժվար չէ նկատել, որ սույլ ձևական տեսանկյունից է այս բայով քերականական ամբողջությունը ժխտական տեսք ստացել, իսկ բովանդակային պլանում այն միանգամայն հաստատական պարզ նախադասություն է՝ *Բայց այս ազգ միայն աղօթիւր եւ պաեովք էլանէ:* Ընեն շաբախյոսական համահիշենր հանդիսացող այս երկու նախադասությունները արտահայտում են միևնույն բովանդակությունը, սակայն լեզվաբանական արտահայտչականության, հաղորդակցման գործընթացում ներազդելու ունակության դիտանկյունից նրանք զգալիորեն տարբերվում են միմյանցից. առաջին կառույցը երկրորդի հստակնաւորությամբ ավելի արտահայտիչ ու ազդեցիկ է՝ շնորհիվ նրանում առկա ժխտական նախադասությունների կիրառության, որոնց իմաստը բովանդակային պլանում կայրելի է արտահայտել *միայն* սահմանափակման եղանակավորիչ պարունակող պարզ նախադասությամբ: Ահա նմանատիպ կառույցի այլ օրինակ. *Ոչ որ գիտէ գ՛ւայր՝ երբ ոչ Որդի, որպէս եւ գճրդի ոչ որ գիտէ՝ երբ ոչ չայր /Ազար., 424/:* Ավելի բարդ շաբախյոսական կառույցներում ժխտական կառուցվածքի բարդ ստորադասական նախադասությանը բովանդակության պլանում նույնպես համապատասխանում է բարդ ստորադասական, իայց արդեն դրական կաղապարավորում ունեցող նախադասության. *Երբ որ գայ առ իս. եւ ոչ ատեայ գեայր իւր եւ գմայր, եւ գկին եւ գորդիս, եւ գեղբարս եւ գրօրս, նա՝ եւ գանձն ես իւր. ոչ կարէ իմ աշակերտ լինել /Ղուկ., ԺԴ, 26/:* Սրան իմաստային առումով շաբախյոսորեն համապատասխանում է *Երբ որ՝ գայ առ իս, եւ ատեայ գեայր իւր եւ գմայր, եւ գկին եւ գորդիս, եւ գեղբարս եւ գրօրս, նա՝ եւ գանձն ես իւր, կարէ իմ աշակերտ լինել* հաստատական նախադասությունը: Նման կերպ է վերլուծատալիքում նաև հետևյալ նախադասությունը. *Եւ ՚հա՝ ասէ ցնոսա. ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ որ է՝ որ երող գտունս, կամ գճնօղս. կամ գեղբարս, կամ գկին, կամ գորդիս՝ փասն արքայութեան /Մտտոժ, եթէ ոչ առնուցու բազմապատիկի ժամանակի յայսմիկ /Ղուկ., ԺԷ, 29/:*

Այս շաբախյոսական կառույցը կարող է հանդես գալ նաև փոքր-ինչ այլ տարբերակով՝ *Երբ* -ի փոխարեն նույն քերականական իմաստն արտահայտող *բէ* շաղկապով. նման դեպքերում վերլուծատալիքում գործընթացում փոխակերպումը էական փոփոխություններ չի կրում. *Քանզի ոչ որ պսակի ընդ ընկերաց իւրեց՝ բէ ոչ ասնջի. այլ իւրաքանչիւր որ անձին իւրում գանձէ, գեղեղէնսն եւ գյալիտենականսն /Փարս., 68/:* Թէ ոչ քրտնեցի մշակն ի տապ խորչակի ջերմոյն արեգակնակէզ լինելով՝ ոչ ըմբռնէ զարդինս շայեկանս ուրախութեան պաղտոցն ձմերայնոյն հանգստեան /Ազար., 105/:

Բացի կրկնակի ժխտման եղանակից՝ գրաբարի բարդ նախադասություններում առկա է մեկ այլ շաբախյոսական՝ կաղապար, որի օգնությամբ վերլուծատալիք-

վում է ողջ նախադասության արտահայտում իմաստը. այն հանդես է գալիս *ոչ/չէ/... մինչև...* կադավարով: Այս դեպքում համադաս նախադասություններից մեկում ժրխավում է գրել գործողության կամ հատկանիշի առկայությունը, այնինչ մյուս նախադասության մեջ մատնանշվում են հանգամանքներ, որոնց առկայության դեպքում նախորդ նախադասության բովանդակությունը գրկվում է ժխտական իմաստից: Այսպես *Ոչ բողից գրեզ մինչև արարից գամենայն ինչ գոր խօսեցայ ընդ քեզ /Ծն., 2Ը, 15/: Եւ է երբեք զի մին փախուցեալ երթայցլ անճնապտոր ուրեք գկեանս անձինն շանկ, և միսն ցասամար բոլորոքեալ՝ սրով գկնի ընթացեալ, ոչ զաղարէ՝ մինչև յագեցուցանէ զցասումն /Եզն., 19/:* Մեջբերված օրինակներից ակնհայտ է, որ առաջին նախադասության մեջ դրսևորվող ժխտական բովանդակությունը որոշակի պայմանների առկայության դեպքում կորցնում է իր շարահյուսական բացատման իմաստը: Շատ դեպքերում նման ժխտական կառույցի օգնությամբ, համեմատած հաստատական բնույթի նախադասության հետ, ափսի շեշտադրված է ներկայացվում երկրորդ նախադասության մեջ պարունակվող սլայմանի, հանգամանքի, ցանկության իրականացման կարևորությունը. հմմտ՝ *Յորժամ արարից գամենայն ինչ գոր խօսեցայ ընդ քեզ՝ բողից գրեզ: Գաղարէ յորժամ յագեցուցանէ զցասումն:* Ինչպես նկատում ենք, վերիմաստավորման արդյունքում բարդ հաստատական նախադասությունը վտխակերպվում է քեև նույնպես բարդ, սակայն այս անգամ արդեն սլայմանի պարագա ստորադասական նախադասության: Հիմնականում ժամանակային իմաստ արտահայտող *յորժամ* շաղկապն այս իրավիճակներում առավելապես կատարում է պայմանական շաղկապի գործառնությունը՝ չկորցնելով իր ժամանակային իմաստային երանգները: Պայմանական շաղկապների առանձնահատկությունների քննարկման ժամանակ, խոսելով արդի հայերենում *յորժամ*-ին համանիշ *երբ* շաղկապի մասին՝ Գ.Գաբրիելյանն իրավացիորեն նկատում է. «Այս շաղկապի օգտագործմամբ հաճախ ժամանակի նշանակությունը լրացուցիչ սլայմանի երանգ է ստանում: Երբեմն այդ երանգն այնքան է ընդգծվում, որ ընկալվում է որպես հիմնական»:³ Ընթերցողասական գրաբարում այս շարահյուսական կառույցի կիրառության և մի քանի օրինակ. *Ոչ վրիպէր թամ սրբոյն. մինչև կատարէր ամենայն /Փարպ., 77/: Նգովր են ի ձեզ Խորայլ. ոչ կարիցլք կալ առաջի բշնամեաց ձերոց, մինչև բառնայց: ք զնգովսն ի ձենց /Յեսու, Է, 13/: Եւ նա ասէ. ոչ կերայց մինչև խօսեցայց զբանս իմ /Ծն., Է-Գ, 33/:*

Գրալսարի բերականական համակարգում ուշագրավ դերակատարում ունի *մինչև/մինչ չև/* շաղկապական միավորը, որն ունի բարդ կառուցվածք և ձևականորեն իր մեջ ժխտական մասնիկ է պարունակում (*մինչ + չէ, մինչ + ոչ*): Այս հանգամանքի շնորհիվ *մինչև*-ը հաճախ է կիրառվում կրկնակի ժխտման արդյունքում դրական վերիմաստավորման ռճակն գործառնության իրականացման նպատակով: Այսպես. *Ոչ են կամք իմ ի դոստ, մինչև խտարեալ իցեն արեզակն՝ եւ յոյս՝ եւ լուսին՝ եւ աստեղք եւ դարձցին ամպր գկնի անձրեւաց /Ժող., ԺԸ, 2/: Ոչ կոչեմ զՏուրիա գորդի իմ, եւ ցուցանեմ մմա գամենայն մինչև մեռեալ իցեմ /Տուրիք, Գ, 1/:* Դժվար չէ նկատել, որ այսպիսի շարահյուսական կառույցները նույնպես, արտահայտման պլանում իրենց մեջ կրկնակի ժխտական համադասական նախադասություններ պարունակելով հանդերձ, բովանդակային պլանում ներկայանում են որպես հաստատական բնույթի բարդ ստորադասական նախադասություններ:

Մինչ այժմ հիմնականում դիտարկում էինք գրաբարի ժխտական նախադասությունների վերիմաստավորման դեպքերը, որոնց արդյունքում այդ շարահյուսական կառույցները հաստատական երանգ էին ստանում: Մակայն գոյություն ունի նաև հակառակ երևույթ՝ երբ հաստատական նախադասություններն են ելիմք ծառայում ժխտական բովանդակային նրբիմաստներ արտահայտելու համար: Ինչպես իրավացիորեն նկատել է Ն. Պառնասյանը, երբ հեղինակը նկարագրում է անցյալում տեղի չունեցած, սակայն իր համար ցանկալի երևույթներ ու գործողություններ՝ դրական բացասորոգյալի օգնությամբ կարող է ժխտական նախադասության իմաստ արտահայ-

³ Գ. Գաբրիելյան, *Ժամանակակից հայոց լեզու. Բարդ նախադասություն*, Եր., 1984, էջ 263:

տել:⁴ Մասնավորապես, դասական գրաբարում այդ նպատակով հաճախ կիրառվում է *երանի* զգացական եղանակավորիչը, որի օգնությամբ խոսելով անցյալի իրադարձությունների մասին՝ խոսողն անուղղակիորեն մատնանշում է դրանց չիրականացված լինելու հանգամանքը: Այսպես. *Երանի թէ կարլի զանձն իմ վարժել /Յովբ, Լ, 24/*: Բովանդակային պլանում համարժեք է *Ոչ 'կարեցի զանձն իմ վարժել* նախադասությանը: Նմանատիպ այլ օրինակներ. *Երանի թէ քաղափորէիր /Թուղթ առ Կորնթ., Գ, 8/*: *Երանի թէ մօտակառոր իսկ լինէին /Թուղթ առ Գաղ., Ե, 12/*:

Ինչպես տեսնում ենք, հաստատական և ժխտական նախադասությունների վերլուծատառքումները գրաբարյան լեզվական գանձարանի հարստություններից են, որոնք ավելի ճոխ ու գրավիչ են դարձրել մեր հնամենի ոսկեդարի լեզուն:

ТРАНСПОЗИЦИЯ УТВЕРДИТЕЛЬНЫХ И ОТРИЦАТЕЛЬНЫХ ПРЕДЛОЖЕНИЙ В ДРЕВНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

— Резюме —

— Ի. Шахвердян —

В статье рассматриваются особенности транспозиций утвердительных и отрицательных предложений в древнеармянском языке. Как известно, во время транспозиции языковой элемент используется в значении противоположного элемента своего парадигматического ряда, вследствие чего он приобретает дополнительную эмоциональность и экспрессивность. По сравнению с утвердительными предложениями отрицательные конструкции обладают более сильным лингвостилистическим эффектом. По этой причине для выражения утвердительных стилистических смыслов часто употребляются отрицательные предложения. В статье рассматриваются также основные типы транспозиций утвердительных и отрицательных предложений в древнеармянском языке.

⁴ Ն. Պ ա ո ն յ ա ն, *Շարահյուսական Լամանիչները ժամանակակից հայերենում*, Եր., 1970, էջ 82: